

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՐԵԳՈՐԾՎԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԼԻԹԵԱՆ

ԳԱՀԻՐԵ



ՅՈԱՐԱՆ «ՊԱՍՏԻ»

ԱՂԵՔԱՆ ԴՐԻԱ

(ԵԳԻՊՏՈՍ)

1907


ԱՆՊ
-ԳԱՀԻՐԵ-

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՐԵԳՈՐԾՎԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱԽԹԵԱՆ

ԳԱՀԻՐԵ



ՏՊԱՐԱՆ «ՐԱՖՖԻ»

Ա Դ Է Ք Ս Ա Ն Դ Ր Ի Ա

(ԵԳԻՊՏՈՍ)

1907

B.R.D.

MINISTÈRE DE L'INTERIEUR

Le Caire, le 7 Mai 1900

Excellences,

J'ai l'honneur de vous accuser réception de votre lettre en date du 12 Avril par laquelle vous avez bien voulu me remettre un exemplaire des Statuts de la Société de Bienfaisance que vous venez de fonder sous la dénomination "UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE".

Vous avez raison de penser que le Gouvernement ne pouvait voir qu'avec la plus grande bienveillance une pareille institution dont le caractère éminemment et exclusivement philanthropique ne mérite que des éloges.

Je vous félicite de vous être préoccupés d'améliorer la situation matérielle et morale des Arméniens, et le Gouvernement, reconnaissant l'utilité de cette œuvre, lui souhaite une ère de prospérité.

Agréez, Excellences, les assurances de ma considération distinguée.

signé : Moustapha Fehmy

L. L. E. E.

BOGHOS PACHA NUBAR

YACOUB PACHA ARTIN

Ա Ա Խ Ա Ք Ա Բ Ա Ե Թ Ե Ե Ա

Ա Ե Ր Ք Ի Ա Գ Ա Բ Ծ Ա Յ Ց

ԳԱՀԻՐԵ, 7 ՄԱՅԻՍ 1906

Վանմաշուք Տեարք

Պատլիւ ութիւն ծանուցանել Զեզ թէ ստացած եմ Զեր Ապրիլ 12 թուակիր Թամակը, որով բարեհանած էք ինձ յղել «Հայկական Բարեգործական Հնդիանուր Միութիւն» անուամբ Զեր Բիմնած Բարեգործական Հնկերութեան Կամոնագրէն օրինակ մը:

Իրաւումք ութիք խորհնելու թէ Կառավարութիւնն ամենամեծ բարեացականութեամբ միայն կրնար նկատել այսպիսի հաստատութիւն մը, որում գերազանցօրէն և բացարձակապէս մարդասիրական հանգամանքը՝ գովեստի միայն արժանի է:

Կը շնորհաւորեմ զԶեզ որ Հայոց նիւթական և բարոյական վիճակի բարելաւման հոգածու կը գտնուիք, և Կառավարութիւնն ընդունելով այդ գործի օգտակարութիւնը՝ յաջողութիւն կը մաղթէ անոր:

Համեցէք ընդունիլ, Վանմաշուք Տեարք, մեծարանաց հաւաստիքը:

(Ստոր.) ՄՈՒՍԹԱՖԱ ՖԼՇՄԻ

Նն. Պ.Վ.

ՊՕՂՈՍ ԲԱՂԱ ՆՈՒՓԱՐ

ԵԱԳՈՒԹ ԲԱՂԱ ԱՐԹԻՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՑՈՒՑԱՆՈՒՄ 1.

ՀԱՅԿԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿԸ

Եկիսպատճի մէջ՝ Ն. Վ. Փօլոս Բաշա Նուպարի
նախաձռնութեամբ հիմուած է «Հայրական
Բարեգործական Ընդհանուր Միուրիւն» անուամբ
ընկերութիւն մը, որուն նպաստակն է Արեւելքի
Հայ ժողովրդեան մտաւոր և բարոյական գար-
զացմանը նպաստել, անսնց նիւթական կացու-
թիւնը բարւոքելու օժանդակել, և այս արդիւնքը
յառաջ բերելու ծառայող որ և է հրատարակու-
թիւն բացաւերել:

Ծնկերութիւնը բնոււ որ և է քաղաքական հան-
գամանք չտնի. սա հիմնական պայման է:

ՑՈՒՑԱՆՈՒՄ 2.

ԿԵՐՈՐ

Ծնկերութեան կեդրոնը և անոր կերոնա-
կան վարչութիւնն ի գահիրէ են:

ՑՈՒՑԱՆՈՒՄ 3.

ՀԱՅՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ
ՊԱՑՄԱՆՆԵՐ

Ծնկերութեան անդամ՝ ըլլալու համար,
պէտք է կեդրոնական վարչութեան ժողովին կամ

ի սառըի բացատրեալ մասնաճիւղերէն միոյն ժողովին խնդրանք մը ներկայացնել, և կամ երկու անդամի կողմէն ներկայացուիլ: Այդ ժողովը նատին ներկայ գտնուաղ անդամնց մեծամասնութեամբ կը քուարկէ ընդունելութիւնը, ըստ արամագրութեան յետազայ 13րդ յօդուածով կանխատեսեալ պայմանաց:

Այսպէս կարող է անդամակցիլ ամնն հայ, առանց խորութեան սեսի կամ գտւանանցի:

ՅՈՒԹԻԱԾ 4.

Միութեան ամեն անդամ, իր ընդունելու բաժանորդագրութիւնն թեան ժամանակ, պարտաւոր է վճարել մտից տուրք մը, որոնք քանիակը ինքը աղաս է որոշելու, բայց որ 10 եղ, զրոշէնուաղ չկրնար ըլլալ: Ասկէ զատ պարտի վճարել նաև ամսական բաժնեգին մը՝ որոնք քանիակը նմանապէս իր կամքին թողուած է, բայց որ եզիստոսի համար 5 եղ, զրոշէ և օտար երկրաց համար համար մէկը գումարէ մը նուաղ չկրնար ըլլալ: Անդամները կարող են միանուագ վճարել մէկ առարտան բոլոր ամսական բաժնեգ ինները:

ՅՈՒԹԻԱԾ 5.

ԲԱՐԵՐԱՐ ԵՒ
ՊԱՏՈՒՈՑ ԱՆԴԱՄՆԵՐ

- Ա. Կեդր, Վարչ, Ժաղալը՝ Բարերար Անդամ ախտղոսը պիստի ասյ այն անձանց՝ որք միանուաղ հաղար անդղիսկան սոկոյ նուեր մը կ'ընեն Միութեան:
- Բ. Եւ Պատուոյ Անդամ ախտղոսը պիստի ասյ այն անձանց՝ որք նոյնպէս միանուաղ չը ըստ

հարիւր անդղիական սոկոյ նուէր մը կ'ընեն
Միութեան :

Բաց ասաի՛ կեդր. վարչ. Ժողովը կրնայ
այդ տիտղաներէն մին կամ միւսը տալ այն
անձերուն՝ որք բացառիկ կամ նշանաւոր ծառայ-
ութիւններ կը մատուցանէն Միութեան : Այս
որոշումը օրինաւորապէս կրնայ տրաիլ միայն՝
եթէ կեդր. վարչ. Ժողովը բազկացնող անդամ-
ներուն առնուազն երեք քառորդին կողմէն ըն-
դունաւ:

Իրաւամը Պատուոյ Միգամ են՝ անդրանիկ
կեդր. վարչ. Ժողովոյ (Յօդ. 10) անդամներն
որք Միութիւնս հիմնելու նպաստած են :

ՅՈՒԹԻԱԾ 6.

Որ և է անդամ, երբ անարժան վարժունք
մը սննենայ, ընկերութեան անդամներու ցանկէն
պիտի կրնայ ջնջափէլ՝ կեդր. վարչ. Ժողովին՝
նոյն նիստին ներկայ անդամաց երկու երրորդին
քուէից մեծամասնութեամբ, ըստ տրամադրու-
թեան յետազայ 13 րդ յօդուածով կանխատեսեալ
պայմանաց :

ՅՈՒԹԻԱԾ 7.

Միութեան հասայթները կը կազմեն

- | | |
|----|--|
| Ա. | Մալից տուրքերը. |
| Բ. | Ամսական բաժնեգինները. |
| Գ. | Դուիրաստութիւնը. |
| Դ. | Կտակներ. |
| Ե. | Եւ կեդր. վարչ. Ժողովոյ սուդածած որ-
եէ հասայթից ազրիւ ըներ: |

ՀԱՍՈՑՔՆՆՐՈՒ
ԳՈՐԾԱՇՈՒԹԻՒՆ

«Դրամագլուխ»ի հաշուոյն պիտի յատկացուին.

- Ա. Մտից տուրքերը,
Բ. Ամսական բաժնեգիններու գումարին մէկ վեցերորդը.
Գ. Զուտ գումարը կամ արժէքը այն կտակաց կամ նուիրատուութեանց՝ որք կտակարարներու կամ նուիրատուներու կողմէն յատկապէս նշանակեալ որոշ նպատակով մը չեն եղած :

Սոյն դրամագլուխոյ բաժնին պատրաստ գումարը կեդր. Վարչ. Ժողովոյ ձեռամբ պիտի վերածուի՝ պետական կամ ուրիշ առաջնակարգ արժէթուղթերու կամ քաղաքաց մէջ հասութաբեր անշարժ կալուածներու:

Բաժնեգիններու գումարը (դրամագլուխոյ բաժնոյն անցած վերոյիշեալ մէկ վեցերորդին զեղջուելէն յետոյ) և դրամագլուխոյ հաշուոյն անցած արժէթուղթերու զուտ տոկոսները՝ կեդր. Վարչ. Ժողովոյ ձեռամբ՝ տարուէ տարի պիտի գործածուին Միութեանս կանոնագրութեան 1. Յօդուածով սահմանեալ նպատակին պահանջած ծախսերուն:

Կեդր. Վարչ. Ժողովը՝ պիտի որոշէ իր բանեղծած հասոյթից ուրիշ աղբիւրներէն զոյացած որ և է գումարի յատկացումը և գործածութիւնը:

Գալով այն նուիրատուութեանց կամ կտակաց որք մասնաւոր որոշ նպատակի մը համարեղած են՝ անսնք պէտք է յատկացուին նուիրատուաց կամ կտակարարաց կողմէն սահմանեալ նպատակին:

ՅՈՒՂԻԱԾ 9.

Ըսկալագրութեան նիւ ԱՆ-
ԴՈՐՌԱԳՐՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԳՐ-
ԹՈՒԹԻՒՆԸ, ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ԸԼԱՄԱԿ ՈՒ-
ԴԱՐԿԵՔՆԵՐՈՒ ՀԱՍՑԵՆ
 Ա. Մտից տուրքերն, բաժնեղիններն, նուի-
դորրագրութիւնը և ընդհանրապէս որևէ անուամբ
ընկերութեան վճարելի կամ՝ յանձնելի գումար-
ներ կամ արժէթուղթեր՝ կրնան օրինաւորապէս
ընկերութեան համար պահանջուիլ կամ գանձուիլ
կամ անոր վճարուիլ, միմիայն կեդր. վարչ. Ժո-
ղովոյ Ատենապետին կամ Փոխ-Ատենապետներէ
միոյն և առանց բացակայութեան՝ կեդր. վարչ.
Ժողովոյ առ այս անուանեալ անդամին, և Գան-
ձապետին կամ իր փոխանորդին հաւաքական ստո-
րագրութիւնը կըող ընկալագրերու կամ անդոր-
րագրերու փոխարէն, ի բաց առեալ Մասնաճիւ-
զերուն կատարելու իրաւունք ունեցած գան-
ձումներուն նկատմամբ եղած այն տրամադրու-
թիւններն՝ որոց մասին պիտի խօսուի յառաջի-
կայ 18րդ յօդուածի (Ա. Հասուածի) մէջ:

ԹՊ.ԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՆԻ Բ. Ամեն թղթակցութիւնը և հազորդակցու-
ացնացան ՀԱՊՈՐԴԱԿ-
ՑՈՒԹԻՒՆԸ
 ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐԻ ՆՈՒ-
ԹԻՐԱՌՈՒՈՒԹԵԱՆՑ ՈՒ-
ՆԵՐՆ պէտք է ուղղուին Քրէտի Լիօնէի Գահիրէի
ՀԱՐՍՈՒՄՆ
 Գ. Օտար երկիրներէ զրկուած բոլոր նուէր-
իրաւուութեանց ՈՒ-
ՆԵՐՆ պէտք է ուղղուին Քրէտի Լիօնէի Գահիրէի
ՀԱՐՍՈՒՄՆ
 Համար:



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՃՈՂՈՎ

ՅՈՒՂԻԱԾ 10.

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ՃՈՂՈՎՑ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ, ԸՆԾՐՈՒ-
ԹԻՒՆ ՆԻ ՆՈՐՈԳՈՒՄՆ

Ա. Կեդր. Վարչութեան կեդրոնավայրն է
Գահիրէ: Առ նուազն 9 և առ առաւելն 15
անդամներէ կը բաղկանայ: Կեդրոնական
Վարչութեան Ժողովը և Մասնաճիւզերու Ժո-

զովոց անդամներու պաշտօնները որք ի ստորև
գծուած են՝ էապէս անվճար են:

ինչպէս որ Յօդ. 1ին մէջ ըսուած է՝ Բնկե-
րութիւնը որեւէ քաղաքական հանդամանք չունի.
ուստի քաղաքական կուսակցութեան մը պատ-
կանող որեւէ անձ չկրնար անդամակցիլ, ոչ
կեդր. Վարչ. Ժողովոյ և ոչ Մասնաճիւղերու Ժո-
ղովոց:

Կեդր. Ժողովը այժմէն իակ կազմուած է, ի
բաց առեալ ներկայ յօդուածիս Գ. հասուածի
տրամադրութիւնը, և հետեալ կերպով.

Տեարք Պօղոս Բաշա Նուպար, Ատենապետ

Եագուալ Արթին Բաշա) Փոխ-Ատենապետք
Երուանդ Աղաթօն Պէյ)

Առաքել Պէյ Նուսլար, Գանձապետ

Տօք. Ն. Տաղաւարեան, Ատենապպիր

Մկրտիչ Անդրանիկեան

Գրիգոր Եղիսյեան

Մ. Մարկոսօֆ Պէյ

Յովհաննէս Յակոբեան

Կարապետ Պէյ Շէրիտմեան

Բ. Կեդր. Վարչ. Ժողովումը մասնա-
կի կերպով աեզի պիտի ունենայ երեք տա-
րեն անդամ մը, յատենի Բնդհանուր Ժողո-
վոյ, և այնպիսի եղանակաւ մը որ ամբող-
ջական նորոգումը 9 տարուան մէջ կատարուի:

Սոյն տրամադրութեան առաջին կիրարկ-
մանց համար, ժաղավը՝ հրաժարման կարգը վի-
ճակաւ կ'որոշէ: Անդամնց փոխանակումը մի ան-
դամ այսպէս կատարուելէն յետոյ, նորոգումը
աեզի կը նենայ ընտրութեան առաջնութեան կար-
գաւ: Շրջանաւարտ անդամները միշտ վերընտ-
րելի են:

Գ. Ամեն անդամ որ Կեդր. Վարչ. Ժողովը,

15է պակաս անդամներէ բաղկացած ըլլայ՝

կրնայ առժամապէս ընտրել մէկ կամ աւելի անդամներ, մինչև որ այդ թիւը ամբողջանայ; Ինդհանուր Ժողովը, այն ընտրութեանց յաջորդող առաջին գումարմանը մէջ, զայնա կը վաւերացնէ և կամ ուրիշներ կ'ընտրէ վերջնապէս:

Եռամեայ շրջանի մը միջոցին ընտրուած որեւէ վարիչ անդամի մը համար՝ վարչական պաշտօնին իննամեայ տեղութենէն կը զեղչուի այն ժամանակամիջոցը՝ որ մինչև իր ընտրութեան թուականը հոլոված է:

Վարիչ մը փոխանակելու համար ընտրուած որեւէ վարիչ անդամ, պաշտօնի վրայ կը մնայ միայն մինչև այն թուականը՝ յարում՝ պիտի լրանար իր փոխանակեալին պաշտօնավարութեան պայմանաժամը:

Ատենագրութիւններն պարտին ստորագրուածիլ՝ նիստին նախագահող վարիչին և նոյն նիստին ներկայ մի այլ վարիչ անդամի կողմանէ: Ատենագրութիւններէ հանել պէտք եղած ընդօրինակութիւններն կամ քաղաքածներն՝ կեդր. Վարչ. Ժողովոյ Ատենապետին կամ փոխ-Ատենապետներէն միոյն կողմանէ պէտք է ստորագրուած ըլլան:

ՅՈՒԹԻԱԾ 11.

Վ.Ս.ԲԻՉ ԱՆԴԱՄՈՑ
ՆՐԱՇԽԱՀՈՐՈՒԹԵԱՆ
ԱԿԱՆԴ

Իւրաքանչիւր վարիչ անդամ պարուաոր է իր պաշտօնավարութեան իրը երաշխիք՝ տալ գրամսի կամ կեդր. Ժողովոյ որոշմամբ ընդունուած արժէթղթերով երկու հարիւր անդդ. ոսկոյ գումար մը և կամ հաստատուն կալուածի մը վրայ համարժէք երաշխաւորութիւն մը:

Այս աւանդը պիտի գրուի և պիտի մնայ Քրէտի Լիոնէի Գահիրէի Մասնաճիւղի զրամա-

տունը՝ մինչև որ վարիչ անդամին պաշտօնավա-
րութիւնը ընդհանուր ժողովոյ կողմէն վերջ գտնէ:
Իբրև երաշխիք արուած արժէթզմերուն
կտրօնները պիտի անջատուին իրենց սեպհակա-
նատիրոջ ձեռքով՝ անոնց պայմանաժամերը հաս-
նելուն:

ՅՈՒՂԻԱԾ 12.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԴԻԽԱՆ

Կեդրոնական Ճողովը ամեն տարի իր ան-
դամներէն կ'ընտրէ Ատենապետ մը, երկու Փոխ-
Ատենապետ, Ատենագլիր մը և Գանձապետ մը:

Այսու հանգերձ, առաջին Զ տարուան շրր-
ջանին համար, Վահմ. Պօղոս Բաշա Նուպար
պիտի ըլլայ Ատենապետ կեդր. Վարչ. Ժողովոյ:

Յաջորդ շրջաններուն համար, Ատենապետը
պիտի ընտրուի Կեդր. Վարչ. Ժողովէն՝ Յ տար-
ուան համար:

Ժողովը պիտի ունենայ վճարեալ ընդհա-
նուր Քարտուղար մը, ինչպէս նաև այլ պաշ-
տօնեաներ՝ երբ որ անոնց պէտքն զգացուի Մի-
տթեան ընդարձակմամբ:

Վարչական Ժողովը կրնայ բացառապէս և
առժամարար իր անդամներէն միջն յանձնել
ընդհ. Քարտուղարութեան պաշտօնը:

ՅՈՒՂԻԱԾ 13.

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԸ
ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Ա. Կեդր. Ժողովը կը գումարուի ամեն ան-
դամ որ Միաթեան շահերը կը պահանջեն:
Գումարումները տեղի կ'ունենան Ատենապե-
տին, կամ անոր բացակայութեանը՝ Փոխ-

Ասենապետներէն միոյն հրառէրով:

Վարչական ժողովը կը դռմարտի՝ երբ
երեք անդամներ կը պահանջեն:

Բացակայ ժողովականները կրնան իրենց
ձայնը տալ Ժողովոյ մեկ ուրիշ անդամին :

Ա. Ուղարկի որ և է դռմարման մը մէջ
արուած որոշամները օրինական համարուին,
որէաք է որ ժողովոյ անդամոց խակական
թուոյն զննէ կէոր ներկայ զանուի : Առ
նուազն երեք անդամոց ներկայութիւնը ան-
հրամեցաւ է, միւս անդամները կրնան ձայ-
ներնին իրենց պաշտօնակցաց տուած ըլլալ:

Կեդր. Վարչ. Ժողովոյ որոշամները՝ ներ-
կայ և ներկայացուցիչ ունեցող անդամոց
ձայներու մեծամանութեամբ կը տրուին:
Չայնից բաժանման պարագային՝ Ժողովոյ
Ասենապետին ձայնը առաւելութիւն անի:

Ինսրութեանց պահուն, եթէ նխոսիններ-
կայ անդամները բացարձակ մեծամանու-
թիւն չկազմեն, եթէլորդ քուէարկութիւն մը
կը կատարուի և այդ պարագային համեմատա-
կանմեծամանութիւնը բաւականկընկատուի:

Յօդուած 14.

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎՈՅ
ԽՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՔ

Կեդր. Վարչ. Ժողովը Միտթեան վարչո-
թեան և գործառնութեանց մասին ամենալնդար-
ձակ իշխանութեանց տէր է :

Մասնաւրաբէս ամեն իշխանութիւն ունի

Ա. Ինկերութեան նպատակին իրազործման
ծառայող ամեն գործ կատարելու : Դարրոց-
ներ, հիւանդանոցներ, գարմանառուններ,

որբանոցներ և նմանօրինակ ուրիշ հաստատութիւններ հիմնելու և կամ անոնց նպաստելու։ Օգնելու և օժանդակելու ամեն հայրառանց խարստթեան գաւանեանքի։ Արհելքի հայաղի գիւղացւոց նպաստելու, անոնց հայթայիմելով հանաւ, կենդանի և մշակելու հոգեր։ Մալի, հրդեհէ կամ ուրիշ և է աղէտքէ կամ պատուհանէ և կամ համաձարակէ արկածեալ տեղեաց ընակիչներուն օգնութեան հաննելու։ Ծնդոնելու կամ ոչ որ և նուիրատուութիւննե կոտակի։ Յօդ, 7 ի մէջ նշանակուած հասոյթի աղբիւրներէն գորս՝ ուրիշ որիէ հասոյթի աղբիւր ստեղծելու։ — Որիէ զումար զանձելու և որիէ վրճարումներ կամ ծախսէր ընելու, որիէ արժեթղթեր ետ առնելու և շարժան ու անշարժ որիէ սասացուածքի տիրանալու, որ և է աւանդ յանձնելու կամ ետ առնելու, — Որիէ շարժուն ու անշարժ կալուած սասանալու կամ ձեռքէ հանելու և շահ և յօդուաց ընկերութեան, որիէ յանձնագիր յանձնելու կոտր որիէ վոխսհրխոտի (idei commis) հաստատելու, Ժողովին վերապահուելով վարչութեան իր բոլոր իրաւոնքները, իր մասակարարած զոյից և սասացուածոց յետո առումն կամ այլոց վոխսնցումն, ինչպէս նաև յիշեալ յանձնագրեր և փոխհրխոտակներու վերջ տալու իրաւոնքը։

Վերսոյիշեալ իրաւոնքները բացատրիչ են և ոչ թէ սահմանարկուած և մի բան կեզր.

Վարչ. Ժողովը տնի բոլոր այն իրաւունքները որ մասնաւորապէս յատկացեալ չեն Շնդհանուր Ժողովոյ:

Կեդր. Վարչ. Ժողովը կարող է իր իշխանութեան կամ իրաւանց ամբողջութիւնը, կամ անոնց մէկ մասը յանձնել իր անդամներուն երկուքէն կամ երեքէն բազկացած մէկ կամ աւելի յանձնախմբերու:

Բ. Կեդր. Վարչ. Ժողովը՝ Քրէտի Լիօնէի Գահիրէի Մասնաճիւղի դրամատունը կամ անոր չգոյութեանը՝ ուրիշ առաջնակարգ գրամատան մը կը յանձնէ պատրաստ արժեթղթերը, բաժնեթղթերը և տրամադրելի գումարները:

Գ. Կեդր. Ժողովը իր պաշտօնաթերթին մէջ պիտի հրատարակէ Ծնկերութեան տարեկան հաշուեկշխար, անոր մէկ պատճէնը պիտի զրկէ իւրաքանչիւր Մասնաժողովոյ, և իր պաշտօնավարութեան տեղեկագրավն Շնդհանուր Ժողովոյ պիտի մատուցանէ զայն:

Եմանապէս իր պաշտօնաթերթին մէջ Կեդր. Ժողովը երեք ամիսն անդամ՝ մը պիտի հրատարակէ Ծնկերութեան նոր անդամներուն ցանկը, անոնցմէ իւրաքանչիւրին մտից տուրքին և բաժնեղիններուն դումարները, նուիրատութիւններն և կտակները:

Դ. Կեդր. Վարչ. Ժողովոյ իւրաքանչիւր անդամ՝ կընայ, ըստ յետազային սահմանեալ Մասնաճիւղերու Ժողովոյ ներկայ գոնուիլ առանց քւեէի իրաւասութեան:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԺՈՂՈՎՆԵՐ

ՅՈՒՂՈՒԱԾ 15.

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԺՈՂՈՎՆ ԿԱԶՄԱ-
ՂԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ՄԸ ԵՒ ԱՆՈՒՑ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐԸ: ԱՆՈՒՑ ԱՆ-
ԴԱՄՆԵՐՈՒՆ ԸՆՏՐՈՒ-
ԹԻՒՆԸ ԵՒԽՈՐՈԳՈՒՄԸ:

Ա. Մասնաճիւղյին Ժողովսեր կը ման կազմա-
կերպուիլ կեդր. վարչ. Ժողովոյ որոշմամբ՝
այն ամեն տեղեր ուր Միութիւնը ունի 10
անդամակից :

Կեդր. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ
իւրաքանչիւր Մասնաճիւղի գործունէութեան
շրջանակը: Միշտ և հանապատ կարող պիտի
ըլլայ ընդարձակել կամ անձկացնել այդ
շրջանակը:

Բ. Իւրաքանչիւր Մասնաճիւղի Ժողովոյ ան-
դամները կ'անուանուին կեդր. վարչ. Ժո-
ղովոյ կողմէ, նորոգումը նոյն Ժողովէն կը
կատարուի ընտրելեաց երկառատիկ ցանկի
մը վրայէ որ կը պատրաստուի նոյն շրջա-
նակին ամսական առնուազն 50 եղ. զրու-
րաժնեղին վճարող անդամներէն բաղկաց-
եալ Ժողովի մը կողմէն:

Այն Ժողովը կը գումարուի Մասնաճիւ-
ղի Ատենապետին հրաւիրադրով և որոյ ինքն
կը նախագահէ և կամ իւր բացակայութեան՝
Փոխ - Ատենապետը: Յիշեալ Ժողովին մէջ,
իւրաքանչիւր անդամ այնչափ ձայն ունի որ-
շափ անդամ 50 եղ. զրուշ կը պարունակէ
իր վճարած ամսական բաժնեղինը: Եթէ
ներկայ անդամնց ձայներու բացարձակ մե-
ծամանութիւն չդոյանայ, երկրորդ քուե-
տրկութիւն մը կը կատարուի, և այս պարա-
գային՝ համեմատական մեծամանութիւնը
բառական կը նկատուի:

Գ. Խւրաքանչիւր Մասնաժողովոյ անդամոց
թիւն առ նուազն Յ և առ առաւելն 7 պիտի
ըլլայ՝ ըստ որոշման կեդր. վարչ. Ժողովոյ:
վերակազմումը պիտի կատարուի ներկայ
Յօդուածիս Բ. Հաստուածին տրամադրու-
թեան համաձայն և Յ տարին անդամ՝ մը՝
կիսովին: Եթէ անդամոց ամբողջական թիւը
անզոյդ է՝ առաջին վերակազմումը կէսէն
մէկ նուազ անդամոց համար կ'ըլլայ:

ՅՕԴՈՒԱԾ 16.

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ
ԴԻՒԱՆՆԵՐԸ

Խւրաքանչիւր Մասնաճիւզի Ժողով իր ան-
դամոց մէջն՝ ամեն տարի կ'ընտրէ Ատենա-
պետ մը, Ատենապետի մը և գանձապետ մը:
Բացառաբար, առաջին եռամեայ շրջանի մը
համար, Ատենապետը կ'ընտրուի կեդր. Ժողովէն:

ՅՕԴՈՒԱԾ 17.

ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ
ԽՈՐՀՈՒԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Կեդրոնական Ժողովոյ խորհրդակցութեանց
համար Յօդ. 13րդի մէջ հաստատուած կանոնները
նմանապէս գործադրելի են Մասնաճիւզերու Ժո-
ղովոց խորհրդակցութեանցը համար :

Մասնաճիւզերու Ժողովոց ատենապետին-
ներն, նիստին ատենապետող անդամին և նոյն
նիստին ներկայ ուրիշ մէկ անդամի մը կողմանէ
պիտի ստորագրուին: Ատենապետութիւններէ հա-
նել պէտք եղած ընդօրինակութիւններն կամ
քաղուածներն, Մասնաճիւզի Ատենապետին կամ
ֆոխ-Ատենապետին կողմանէ պէտք է ստորագրո-
ւած ըլլան:

ՅօդոՒԱԾ 18.

ՄԱՍՆԱՃԻՒՎԵՐՈՒ
ԺՈՂՈՎՈՑ ՊԱՇՏՈՆԸ

Ա. Մասնաճիւվերու Ժողովսերն, իրենց շրջանակին սահմաններուն մէջ, Միութեան նորանոր անդամակիցներ կը գտնեն, կը ջանան անոնց թիւը աւելցնել, իրենց տրամադրած ամեն միջոցներով անոր ծաւալմանը կ'աշխատին, կը գանձեն մտից տուրքերը ու բաժնեգինները, և նուիրատուութեանց գոյացման ջանագիր կը լլան։ Եորդնոտիր անդամներ ընտրուելուն ու նուէրներ հաւաքուելուն՝ պարափն ծանուցանել առուններն և հասցէններն նոր անդամոց և նուիրատուաց՝ կեդր. վարչ. Ժողովոյ, որ զայն կը հաստարակէ պաշտօնական ցուցակներու միջոցաւ ըստ 14րդ Յօդ.ի գ. հատուածի տրամադրութեան։ Մտից տուրքերն, ամսաբաժիններն, որպէս նաև հազար ֆրանքէ նուազ եղող նուէրներն կը գանձուին Մասնաճիւվի Ատենապետէն կամ ՓոխԱտենապետէն և գանձապետէն ստորագըրուած ընկալագիրներու և անդորրագրերու միջոցաւ. իսկ անոնց բացակայութեան՝ Մասնաճիւվի Ժողովին կողմանէ անոնց պաշտօնը առժամաբար վարելու համար անուաննեալ երկու անդամոց ստորագրութեամբ. իսկ հազար ֆրանքէ աւելի նուէրներն հարկ է ուղղաղէս յղել Քրէտի Լիօնէի Գահիրէի գործակալութեան՝ Միութեանս հաշտոյն անցնելու համար։ Կարող են առաջարկներ ընել կեդր. Ժողովոյ և իրենց անդամները

կրնան ներկայ գտնուիլ յիշեալ Ժողովոյ
նիստերուն՝ երբ Գահիրէ զտնուին, առանց
սակայն քուէի իրաւունքի:

Բ. Մասնաճիւղերու Ժողովներն պարտաւոր
են կանոնաւոր տոմարակալութիւն մը ունե-
նալ և ի հաշիւ Միութեան՝ Քրէտի Ախոնէի
Գահիրէի գործակալութեան դրկել գոյա-
ցած գրամմերը՝ երբ անոնց գումարը հա-
զար ֆրանքի համնի:

Գ. Խւրաքանչիւր վեցամսէի վերջը, պարտա-
ւոր են Կեդր. Վարչ. Ժողովոյ դրկել իրենց
հաշիւները՝ իրենց շրջանակին վերաբերեալ
ամեն խնդրոց վրայ պատրաստուած տեղե-
կադրով մը:

Դ. Կեդր. Վարչ. Ժողովին առանց նախապէս
արտօնութիւն ստանալու չեն կարող ընել որ-
եէ ծախսք, կամ որեէ որոշում տալ և կամ
յանձնառութիւն մը ընել. պարտաւոր են
ամենայն ճշգութեամբ համակերպիլ Կեդր.
Վարչ. Ժողովոյ որոշմանց, որ իրաւունք ունի
Մասնաճիւղերու Ժողովոց անդամները հրա-
ժարեցնելու՝ երբ անոնք պարտազանց զըտ-
նուին և առժամանակեայ յաջորդներ կար-
գելու, մինչև որ վերադրեալ Յօդ. 15րդի
մէջ նշանակուած եղանակաւ վերջնական
ընտրութիւն կատարուի:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՈՒԹԻԱՅ 19.

Ա. Բնոդհանուր Ժողովը Միութեան անդամոց
ընդհանրութիւնը կը ներկայացնէ : Ծնկե-

ըութեան բոլոր շահերու մասին գերիշ-
խանութեամբ կը տնօրինէ; իր որոշումները
պարտաւորիչ են ամենուն, նոյն իսկ բացա-
կաներուն և տարակարծիքներուն համար:

Բ. Բնդհանուր Ժողովոյ մասնակցիւ կարե-
նալու համար, գոնէ Յ տարիէ ի վեր ան-
դամ եղած ըլլալու է և այս ժամանակա-
միջոցին՝ ամսական առ նուազն 50 եդ. զրոշ
բաժնեգին մը կանոնաւորապէս վճարած:
Սակայն և այնպէս ներկայ յօդուածիս Զ.
հասուածավ ըստած առաջին Բնդհանուր
Ժողովին ներկայ գտնուելու համար՝ որ եր-
րորդ տարիէն ետքը տեղի պիտի ունենայ՝
բաւ է 2րդ և Յրդ տարիներն միայն
վերոյիշեալ բաժնեգինը վճարած ըլլալ:

Խւրաքանչիւր անդամ իրաւոնք ունի այն-
չափ ձայնի որչափ անդամ 50 եդ. զրշ. որ
կը պարունակէ իր ամսական բաժնեգինը:

Իրաւամբ Բնդհ. Ժողովոյ անդամ են՝
Բարերար և Պատուոյ անդամները, որոնց մա-
սին խօսուած է Յօդ. 5ի մէջ: Բացի այն
ձայներէն զոր կրնան ունենալ իրքի բաժ-
նեվճար անդամ, առնց առաջիններէն խւրա-
քանչիւրը 10 ձայնի և Պատուոյ անդամներէ
խւրաքանչիւրը 4 ձայնի իրաւոնք ունին:

Բնդհանուր Ժողովոյ մասնակցելու իրաւ-
ոնք ունեցող որիէ անդամ կրնայ անոր
մէջ իրեն ներկայացուցիչ կարգել՝ այդ ի-
րաւոնքը անձեռապէս ունեցող ուրիշ որիէ
անդամ մը: Ներկայացուցիչը իր ձայներէն
զատ կ'ունենայ իր յանձնատարներւն ձայ-
ներն ուլ:

Յանձնարարներու վոխամնորդագրերը պարտին վաւերացեալ ըլլալ կամ օրինական ձևակերպութեամբ և կամ կեդր. Վարչ. Ժողովոյ կամ տեղական Մասնաճիւղերէ միոյն Այտենապետէն և կամ Փոխ-Այտենապետներէն միոյն կողմանէ :

Գ. Բնդհանուր Ժողովը միմիայն կը գումարուի իր կեդրսնատեղին ի Գահիրէ օրակարգի խնդրոց ամփոփամբ՝ ներկայացնող հրաւերի ազգով մը՝ որ կեդր. Վարչ. Ժողովոյ կողմէն կը հրատարակուի իր պաշտօնաթերթին մէջ, գումարման համար որոշուած օրէն առնուազն երեսուն օր տուած:

Դ. Անոր կը նախագոհէ կեդր. Վարչ. Ժողովոյ Այտենապետը՝ իսկ անոր բացակայութեան, Փոխ-Այտենապետներէն մին կամ Այտենապետի պաշտօնը կատարող վարիչ անդամներ:

Այտենապետը կ'անուանէ Այտենապետիրը քուեախայլ (serutateur) կը նշանակուին ամենէն աւելի ձայն ունեցող և այդ պաշտօնը յանձն առնող երկու անդամներ:

Ե. Կեդր. Վարչ. Ժողովոյ կողմէն պատրաստուած օրակարգին մէջ նշանակուած խնդիրներէն զատ ուրիշ նիւթերու վրայ չէ կարելի խորհրդակցիլ:

Բնդհանուր ժողովոյ ատենապետթիւնք պիտի աստրագրուին՝ այսպէս կազմուած գիւտնի անդամներէն: Այտենապետթիւններէ հանել պէտք եղած բնդօրինակութիւններն կամ քաղաքածներն, կեդր. Վարչ. Ժողովին Այտենապետին և կամ Փոխ-Այտենապետներէն միոյն կողմանէ:

- թէն միոյն կողմանէ պէտք է ստորագրուին:
- Զ. Ծնդհանուր Ժաղովը կը գումարուի կանոնաւորապէս ամէն տարւոյ առաջին եռամսէին. առաջին ժողովը երեք տարւոյ գործունեութենէ ետք տեղի պիտի ունենաց,
- Եսելու համար վարչութեան Ժաղովոյն՝ Ծնկերութեան կացութեան վրայ տուած տեղեկագիրը և առնելու համար հոլոված տարեշրջանին հաշիւները — հաշիւներ՝ որք նախապէս գումարման օրէն 15 օր առաջուընէ սկսեալ՝ անդամոց տրամադրութեան տակ դրուած ըլլալու են Միութեան կեզրոնին մէջ,
- Ներկայացուած հաշիւները վաւերացնելու կամ ուղղելու,
- Եթէ հարկ կայ վարիչներուն ընտրութիւններն կտոտարելու,
- և անօրինութիւններ ընելու համար որիէ բացառիկ կարեորութիւն ունեցող խնդրոց մասին՝ որք հրաւիրագրի մէջ նշանակեալ օրակարգին մէջ կրնային անցնիլ:
- Ե. Վերսպեեալ խնդիրներէն զատ, Ծնդհանուր Ժաղովոյ անկէ կանոնագրի վրայ ըլլալիք վախճառաւթեանց, յաւելմանց կամ յապաւմանց մասին որիէ որոշմունք, մասնաւորաբար,
- (ա) Ծնկերութեան նպատակներէ միոյն ընդգամակումը, սեղմումը, ձեափոխումը կամ փոփոխումը, առանց սակայն ամենին որիէ էական փոփոխութիւն մը կամ վնաս մը րերելու Յօդ. 1 ի մէջ յայտնուած իր ընդհանուր նպատակին և հիմնական հանգամանաց:

- (ր) Ծնկերութեան անուան ձեսփոխումը կամ փոփոխումը, պայմանաւ որ այդ փոփոխումը կամ ձեսփոխումը բնաւ որևէ այլայլում կամ վեաս չպատճառէ և ենթագրել իսկ չույ՝ վերոյիշեալ ընդհանուր նպատակին և հիմնական հանդամանաց:
- (դ) Ծնկերութեանս որևէ եղանակաւ ձուլումը համանման կամ նոյնառեսակ որիշ ընկերութեան մը հետ և կամ վերջապէս ընկերութեան կազմալուծումը:
- վերոգրեալ պարագաներուն թուռմը լոկ բացառքիչ է և ոչ սահմանակիչ:
- Բ. վերոգրեալ (ա) (ր) և (դ) հասուածներով թուռքիեալ պարագայից մէջ, ժողովոյ խորհրդակցութիւնք այն ատեն միայն օրինական կրլան՝ երբ ներկայ և ներկայացած անդամները առ նուազն կէսը կազմեն ընդհանուր ժողովոյ ներկայ գանուելու իրաւնք ունեցող անդամներուն, և որոշումը օրինական ըլլալու համար, պէտք է ընդաւնուի մեծամասնութենէ մը՝ որ ներկայ և ներկայացած անդամնց ձայներուն երեք քառորդը ներկայացնէ: Այսու հանդերձ, եթէ ժողովոյ մէջ Ծնդհանուր ժողովոյ ներկայ գրանուելու իրաւնք ունեցող անդամնց կէսը անձամբ ներկայ չէ, ժողովը կընայ՝ վերոյիշեալ մեծամասնութեամբ՝ առժամանակեայ որոշում մը տալ: Այդ պարագային, նոր ընդհանուր ժողովը կը գտամարտի, ընդունուած առժամանակեայ որոշումը պարունակող նոր ազգագրավ մը, և այդ որոշումը վերջնական կ'ըլլոյ, եթէ նորոգ դամարման մէջ ներ-

կայ և ներկայացուած անդամոց ձայներուն
երեք քառորդէն ընդունուի, բաւական է որ
ընդունուի ժողովոց ներկայ դանուելու իրա-
ւոնք ունեցող անդամոց մէկ քառորդը ներ-
կայ ըլլայ կամ ներկայացուցիչ ունենայ:

Ուրիշ որ և է պարագայի մէջ, Ժողովը՝ թէ
տարեկան և թէ արտաքոյ կարգի նխառի
գումարուելուն, վաւերական կերպով խորհըր-
դակցած կըլլայ, եթէ ներկայ և ներկա-
յացուած անդամոց թիւը գոնէ մէկ հինգեր-
րորդը ըլլայ Բնդ. Ժողովոյ ներկայ գըտ-
նուելու իրաւոնք ունեցող անդամոց թուրյն,
և որոշմունք կը տրուին ձայնից մեծամաս-
նութեամբ:

Եթէ այդ օրինական թիւը չգոյանայ երկ-
րորդ ժողով մը կը գումարուի և վաւերա-
կան կերպով կը խորհըրդակցի, ինչ որ ալ-
րլայ ներկայ և ներկայացուած անդամոց
թիւը:

Բնարութեանց պարագաներուն մէջ, եթէ
բացարձակ մեծամասնութիւն չգոյանայ, երկ-
րորդ քուէարկութիւն մը կը կատարուի և
այն տաեն համեմատական մեծամասնու-
թիւնը բաւարար կը նկատաւի:

Թ. Կեդրանական վարչ Ժողովը պարտաւոր
է տարեկան Բնդհ. Ժողովոյ օրակարգը ան-
ցընել՝ Բնդհանուր Ժողովոյ մասնակցելու ի-
րաւոնք ունեցող և առ նուազն հարիւր
ձայներու ամբողջութիւն մը ներկայա-
ցնող գոնէ տասն անդամներէ կազմուած
խումբի մը կազմէն Յաւնվար 1 էն առաջ արդ-
մասին իրեն մատուցուած տաղարկու-
թիւնները:

ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

ՅՈՂՈՒԱԾ 20.

**Կազմալուծման պարագային՝ լճդհանուր
Ժողովը պէտք եղած որոշումն պիտի տայ գրամի
գործածութեան և ընչից տնօրինութեան մասին,
կանոնագրիս Յօդ. 1 ով սահմանեալ նպատակին
համար։ Իր յարմար դատած կերպով պիտի կըր-
նայ որոշել վերոյիշեալ գրամին և ընչից՝ միշտ
միենոյն նպատակին համաձայն՝ սեպհականացու-
մը կամ փոխանցումը։**

**Մասնաւոր նպատակներու համար եղած
նուիրատուութիւններէ և կտակներէ գոյացած
եկամուտները պիտի գործածուին նուիրատուաց
և կտակարարաց որոշած նպատակին։**

Այսօր, 15 Սպրիլ 1906, ս. Զատկի առաջիմ օրը,
ստորագրեալքս համախմբեալ ի Գահիրէ Ն. Վ. Պողոս Բա-
շայի ապարանքը, կազմեցիմք Ընկերութիւն մը «ՀԱՅԿԱԿԱՆ
ԹԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ» անուամբ, ըստ
տրամադրութեամ և պայմանաց վերոզրեալ կամունագրին
որ կը կըէ այսօրուամ թուականն և մեր ստորագրութիւմը։

Ընկերութեան վարչական առաջիմ ժողովը բաղկացած
է՝ կամունագրին 1-րդ յօդուածիմ մէջ թշանակուած տասն
անդամներէն և այսօրութիւն կնկերութիւնս կազմակերպեալ
հոչակուած է։

ԵԱԳՈՒԹ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ
ԵՐՈՒԱՆԴ Գ. ԱՂԱԹՅՆ
Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ
Մ. ՄԱՐԿՈՍԵԱՆ
Կ. ՇԵՐԻՑՅԵԱՆ

ՊՈՂՈՍ ՆՈՒՊԱՐ
ԱՌԱՋԵԼ ՆՈՒՊԱՐ
ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԿԱՐԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԻՆ
Յ. ՅԱԿՈԲԵԱՆ